

ՖՐԱՆԶԻՍԿԱՆ ՊԱՊԵ ԿՈՉ Կ'ՈՒՂԴԵ՛ ՂԱՂԵՑՆԵԼՈՒ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՒ ԻԲՐԵՒ ՄԱՐԴԱՅԻՆ ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔ ՄԻԱՌՈՐՈՒԵԼՈՒ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐԻՆ ԴԵՄ



Ֆրանչիսկոս պապը աշխարհին կոչ ուղղած է դարձեցնելու «բոլոր տեսակի պատերազմները» եւ գործելու իբրեւ «մեկ մարդկային ընտանիք»՝ պայքարելու համար «ԶՈՎԻՏ-19»՝ «Քորոնա» ժահրի համաճարակին դէմ:

«Սի.Էս.Էս.» կը հաղորդէ, որ Ֆրանչիսկոս պապի կիրակնօրեայ աւանդական քարոզը պատկերասփռուած է Կատիկանէն, որովհետեւ «Քորոնա» ժահրին պատճառով Ս. Պետրոս հրապարակը փակ է այցելուներուն դիմաց:

«Համաճարակի դէմ միացեալ գործողութիւնները կրնան օգնել իւրաքանչիւրս հասկնալու՝ իբրեւ մեկ մարդկային ընտանիքի անդամներ, եղբայրական կապերը ամրապնդելու կարիքը», քարոզի աւարտին ըսած է պապը՝ միանալով ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուլթերեսի՝ համաշխարհային զինադադար հաստատելու կոչին:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը այս կողմ ուղղած էր օրեր առաջ՝ «սահմաններ չճանչցող» «Քորոնա» ժահրի տարածման լոյսին տակ:

«Կը միանամ բոլոր անոնց, որոնք ընդունած են այս կոչը եւ կը իրաւորեմ բոլորին դադրեցնելու բոլոր տեսակի պատերազմները, թշնամութիւնը եւ աշակցելու մարդասիրական օժանդակութեան համար միջանցքներու բացման եւ դիւստադիտութեան թափանցիկութեան», ըսած է Ֆրանչիսկոս պապը:

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԶՈՐԵԱՆ ԵՐԿՈՒ ԹԵՒԱՌՐ ՀՐԹԻՌ ԱՐՁԱԿԱՃ Ե ԶԱՓՈՆԱԿԱՆ ԾՈՎՈՒՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ



Հիւսիսային Զորեան փոքր հաստոյութեամբ երկու թեւաւոր հրթիռ արձակած է Ճափոնական ծովուն ուղղութեամբ: Այս մասին կը հաղորդէ «ՌԻՒ Նովոսթի» լրատու գործակալութիւնը՝ վկայակոչելով Հարաւային Զորեայի սպայակոյտի պետերու միացեալ կոմիտէի յայտարարութիւնը:

«Հիւսիսային Զորեայի արձակած հրթիռները անցած են 230 քիլոմէթր՝ 30 քիլոմէթր առաւելագոյն բարձրութեան վրայ», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Կը նշուի, որ արիւկ ամսուան սկիզբէն ի վեր արդէն չորրորդ փորձարկումն է:

Մինչ այդ, Հիւսիսային Զորեան հրթիռներ արձակած էր 2, 9 եւ 21 մարտին: Նախորդ հրթիռներու արձակումը դիտելու զանգած էր Նաեւ երկրի ղեկավար Քիմ Եոնկ Ընը, որ 21 մարտին շարք մը զօրավարներու հետ ուշի-ուշով խոտածածկ տարածքէն հետեւած էր իրադարձութիւններուն:

«ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Նշենք, որ անցեալ հիւզարթի տեղի ունեցած Եւրոպական Միութեան վեհաժողովի ընթացքին Գերմանիան ու Նետերլանտները ուժեղ կերպով ընդդիմացան Իտալիոյ, Սպանիոյ, Փորթուգալի եւ Ֆրանսայի տնտեսութեան խթանումը ֆինանսաւորելու համար միացեալ պարտաւորութիւնը հրապարակելու նախաձեռնութեան: Բոլոր բանալէներ արձանագրուեցան Նաեւ բժշկական սարքերու եւ սահմաններու հսկողութեան հարցերուն շուրջ:

Աւստրիոյ վարչապետ Սեպասթիան Զուրց իր զայրոյթը արտայայտեց Եւրոպական Միութեան մէջ տիրող երկակի չափանիշներուն նկատմամբ, երբ Գերմանիայէն դիմաւորելու ապահովումը դանդաղեցաւ, իսկ այլ երկիրներ ընկալաւորեցին Վիեննայի կողմէ Իտալիոյ հետ սահմանի հսկողութեան հաստատումը:

«Տագնապի աւարտէն ետք, Եւրոպական Միութեան մէջ դժուար ընկալումներ պիտի ըլլան», «Քորոնա Յայթունկ» օրաթերթին ըսաւ Զուրց:

«ԻՆՉ ԱՆ ԸԼԼԱՅ, ՄԻԱՄԻՆ ԵՆՔ...»

Շարունակուած Ա. Էջէն

տարբեր է Լեյվաւանի կառուցողական ընդհանրութիւնը, ուր իւրաքանչիւր տան ուրախութիւնը միւս տուններու ալ ուրախութիւնն է: Ան շեշտեց, որ դժուար են օրերը, մասնաւորապէս որ բոլորս այս անյայտ թշնամիին դէմ սովորական միջոցներով չենք կրնար կռուիլ, ուրեմն այս համաճարակին դէմ իւրաքանչիւրս իր կեցուածքով, իր համոզումով կը կռուի՝ ինքնազաւուժով, տան մէջ մնալով, շրջապատը մնայուն կերպով հակաանխելով, որպէսզի այս անյայտ թշնամին մուտք չգործէ մեր շրջանակներուն մէջ:

Բագրատունի հաստատեց. «Ձեզմէ իւրաքանչիւրին կեանքը մեզի համար մեծ արժէք է, այսօր ո՛չ հերոսութիւն պէտք է, ո՛չ մեծամտութիւն: Այս ալ կ'անցնի, պայմանաւորաբար մեր մէջմէ իւրաքանչիւրը իր անձին, իր ընտանիքի անդամներուն նկատմամբ պատասխանատու կեցուածք ցուցաբերէ, հետեւի խորհուրդներուն եւ թելադրութիւններուն»:

Ան կոչ ուղղեց. «Ղուք տո՛ւնը մնացէք, եւ մեր տղաքը անհրաժեշտ միջոցներով ձեզի կը հասնին: Մենք ոսկիի հանքեր չունինք, այլ մեր հարստութիւնը մեր ժողովուրդն է: Բաժնը՝ 3000 հալաներից ոչ ոք, յառաջիկային պիտի բաժնուի 1500 չափաբաժին եւս: Կարիքաւոր ընտանիքներուն պիտի տրուին Նաեւ ուստեսողէի 2000 կտրուկներ: Պէտք է ի մտի ունենալ իրականութիւն մը, որ կան կարիքաւորներն ո՛ր շատ կարիքաւորներ: Հիմա է ճիշդ պահը իրարու օգնելու, որպէսզի բոլորս կարենանք ապրիլ: Բոլորս իրարու ձեռք պիտի տանք, մեր մեծահարուստները, նիւթապէս անելի բարեկեցիկ եղողները հիմա՛՛ է, որ պէտք է օգնութեան հասնին այս պայմաններուն մէջ անգործ վիճակի մէջ յայտնուածներուն, տնտեսական եւ ընկերային շատ ծանր վիճակի մէջ եղողներուն»:

Իր խօսքը եզրափակելով՝ Յակոբ Բագրատունի պատշաճաբանեց իր անհոգութիւնը կոչ ուղղեց տունը մնալու, շատ անհրաժեշտութեան պարագային միայն հոսկէ դուրս գալու, որպէսզի ըլլան առողջ եւ հանգիստ:

ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի «Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին հետ ունեցած կարճ հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ լիբանանահայութիւնը կազմած է «Քորոնա»-ի ճգնաժամային շտապը՝ նախաձեռնելով լիբանանահայոց օժանդակութեան: «Եւ մեր սահմանափակ կարողութիւնները նկատի ունենալով, մենք միայն լիբանանահայոց կ'օժանդակենք», ըսաւ ան:

Յ. Բագրատունի նշեց, որ շտապը կոչ ուղղած է բոլորին մնալու իրենց բնակարաններուն մէջ եւ յանձնառու մնալու պետութեան ցուցմունքներուն՝ խոստանալով հասնիլ բոլորին: «Տղաքը ամենայն հանդարտութեամբ կ'աշխատին: Անոնք պէտք եղած բոլոր միջոցները կ'որդեգրեն՝ հասնելու համար մեր ժողովուրդին կարիքներուն: «Քորոնա»-ի ճգնաժամային շտապը արդէն իսկ 3000 ընտանիքի հակաանխելի նիւթեր պարունակող տրցակներ ցրուած է: Անելի ուշ պիտի բաժնենք Նաեւ կտրուկներ, որոնցմով ընտանիքները պիտի կարենան սննդամթերք ապահովել՝ ճշդութեամբ կեդրոններէ, եւ այնպիսի ձեւով, որ եռուզեռ չստեղծուի: Ծնողային կողմէ Նաեւ առաջարկուած է դեղորայք ապահովելու նախաձեռնութիւն մը: Ամեն ջանք ի գործ կը դնենք, որ մարդիկ իրենց բնակա-



Photo by Markos

րաններուն մէջ մնան», շեշտեց ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ի՞նչ խորհուրդ կու տայ թրիփոլիի երեսփոխաններուն, Յ. Բագրատունի յայտնեց, որ այս փուլին ընթացքին կարելորդ այն է, որ քաղաքացիները մնան ապահով եւ անոնց կարիքները կարելի ըլլայ հոգալ: «Կարելորդ է, թէ ո՛վ կը նախաձեռնէ աշխատանքը: Կարելորդ ժողովուրդին հասնիլն է: Հայկա-



Photo by Markos



Photo by Markos

կան երեք կուսակցութիւններն ու երեք յարանուստութիւնները այդ նպատակով կը գործեն», հաստատեց երեսփոխան Բագրատունի:

Ապա լիբանանահայ երգիչներ Կիզէ Տիշէքէնեան եւ Վարդան Տէր Սարգիսեան Լեյվաւանի թաղամասերը շրջագայելով երգեցին ազգային-հայրենասիրական երգեր, նուագակցութեամբ Սեդո Պաղտասարեանի: Պատշաճաբանեց իրարոյքները երգով եւ դրօշներ ծածանելով բերին իրենց մասնակցութիւնը՝ հաւաքական յոյս ներշնչելով բոլորին, թէ լիբանանահայութիւնը այս փուլն ալ պիտի յաղթահարէ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

վիրաբուժական կեդրոնին, «Անի եւ Նարոտ» յիշատակի հիմնադրամին եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամին հետ գործակցաբար, մէկ թոն բժշկական իրեր ուղարկուեցան Հայաստան եւ Արցախ: Ներկայիս յաւելեալ աշխատանք կը տարուի շտապ օգնութեան երկրորդ բաժինը ապահովելու: Արցախի մեր հայրենակիցներուն աջակցելու համար համահայկական օժանդակութեան կարիքը ունինք: Նուիրատուութեանց համար այցելել՝ <http://www.ars1910.org/give> :

Առաւելաբար, Հայաստանի ՀՕՄ-ը 1000 ամերիկեան տոլար փոխանցած է Հայաստանի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութեան, ինչպէս նաեւ 5000 ամերիկեան տոլար՝ Երեսնի վերականգնողական Հերացի թիւ 1 հիւանդանոցի Կեդրոնի երեխաներու բաժանմունքին: ՀՕՄ-ի զանազան շրջաններ եւ մասնաճիւղեր միացած են քոյր կազմակերպութիւններուն, եկեղեցիներուն եւ կառավարական կառույցներուն՝ օգնելու համար մեր համայնքները գտնուող վտանգուած եւ անապահով խաւին:

ՀՕՄ-ը հիմնեց Համաշխարհային տագնապի շտապ օգնութեան ֆոնը, որուն միջոցով կարելի պիտի ըլլայ նիւթական թէ բժշկական սարքերու նուիրատուութիւններ ստանալ՝ մեր գաղութներուն օժանդակելու նպատակով: Ինչպէս նաեւ ներկայ նեղ օրերուն նեցուկ կանգնիլ կարիքաւորներուն՝ անոնց տրամադրելով ապրուստի նուազագոյն պէտքերը:

Եթէ կը փափաքիք եւ կարողութիւնը ունիք օժանդակելու, կը խնդրենք կապ հաստատեք ձեր շրջանի ՀՕՄ-ի վարչութեան հետ: Ցաւեւեալ տեղեկութեանց համար կարելի է այցելել ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան կայքը (<http://www.ars1910.org/>), ընկերային ցանցերը եւ հետեւիլ տեղական թերթերուն:

Մեր հայրենակիցներուն ապահովութիւնը նկատի առնելով՝ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութիւնը որոշում տուաւ յետաձգել ՀՕՄ-ի 110-ամեակին նուիրուած ձեռնարկները, որոնք տեղի պիտի ունենային օգոստոս 30-էն սեպտեմբեր 10, Հայաստանի եւ Արցախի մէջ: Յետաձգուած է նաեւ ՀՕՄ-ի 7-րդ Նաւապտոյտը, որ պիտի իրագործուէր Նոյեմբեր 2020-ին: Բոլոր ձեռնարկներուն նոր ժամանակացոյցը կը յստականայ, երբ ժահրի տարածման վտանգը վերջնականապէս դադրի:

Փաստօրէն, Հայ օգնութեան միութիւնը, մէկ դարէ անելի պատմութիւն կերտած է: Ընդհինի մեր անդամներուն նուիրումին եւ վճռականութեան, ինչպէս նաեւ մեր համակիրներու նեցուկին, կրցած ենք եւ կը շարունակենք բարձրորակ ծառայութիւն տրամադրել մեր աշխարհասփիռ գաղութներուն, կարճ ժամանակամիջոցի մէջ: Ձեր շարունակական քաջալերանքը կ'ապահովէ մեր կարողութիւնը՝ պահելու համար հայ գաղութները եւ ձեռք երկարելու հոն, ուր կարիքը կայ: Ընդհակառակութիւն բոլորիդ:

Համաշխարհային շտապ օգնութեան ֆոնտին նուիրատուութիւններու համար կրնաք ներկայ տեղեկել <http://www.ars1910.org/give> հասցէին կամ ձեր նուիրատուութիւնները դրկել ՀՕՄ-ի Կեդրոնական գրասենեակ՝ Armenian Relief Society, Inc. 80 Bigelow Ave., Suite 300, Watertown, MA 02472.

AFHIL
ARMENIAN MUTUAL FUND
Since 1998

20 Years of Commitment

The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others

Mahatma Gandhi

Health Insurance

Travel Insurance

GoodCare Clinic

Car Insurance

Health Clubs

Home Medical Equipment

BOB - Western Union

University and Student Fund

99115C+ Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 556/7

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԳԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:



«ՔՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊԻ ԹԷԺ ԳԻԾՆ Է (HOTLINE) 03-188911